

### «ԳԻՐՔ ԾՆՆՂՈՅ»-Ի ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

Երեւանի Մաշտոցեան մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ 1985 թ. հրատարակուել է «Գիրք Ծննդոց»-ի դասական գրաբարով թարգմանուած քննական բնագիրը, որ ԺԲ-ԺԶ դդ. 43 ձեռագրի եւ այլ աղբիւրների հիման վրայ աշխատասիրել է Անդրանիկ Զեյթունեանը: 453 էջանոց հատորը, որ լոյս է ընծայել Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչութիւնը որպէս «Հայ հնագոյն թարգմանական յուշարձաններ»-ի առաջին գիրք, բաղկացած է հրատարակութեան պատասխանատու խմբագիր Լ. Տէր-Պետրոսեանի «Հայ հնագոյն թարգմանութիւնների մատենաշարը» հմտալից ակնարկից (էջ 5-78) եւ «Գիրք Ծննդոց»-ի քննական բնագրից (էջ 145-395), որ ունի ներածութիւն (էջ 81-144) եւ ծանօթագրութիւններ (էջ 397-452): Լցուած եմ մեծ ուրախութեամբ, որովհետեւ վերջապէս սկսում է իրականանալ ամէն մի հայ բանասէրի ամենավառ երազանքներից մէկը՝ Հայ ողջ մատենագրութեան կոթող Ս. Գրքի քննական եւ գիտական հրատարակութիւնը: Համոզուած էի, որ միայն ժամանակակից Երեւանը ի վիճակի էր իրականացնելու այս ծանրակշիռ եւ մեծածախս աշխատանքը, բայց կարծում էի նաեւ, որ դա մասնագիտացած մի խմբակի գործը կը լինի, եւ բնագիրը տպագրութիւնից առաջ կ'ենթարկուի գիտական քննարկման: Եւ ասա անսահման համբերութեամբ եւ անհատնում ջանասիրութեամբ, ինչպէս եւ անհրաժեշտ գիտելիքներով դիտուած մի անձ պատրաստել է մի քննական բնագիր, որ թէեւ անթերի չէ, բայց ի վիճակի է բարելաւուելու ձեռագրերի տարընթեցուածների առկայութեան եւ քննարկումների շնորհիւ: Միայն ու միայն այս նպատակով ուշադրութեամբ կարդացի ամբողջ բնագիրը եւ մտքերի փոխանակման կարգով արտայայտում եմ նկատածներս մեծագոյն մասը, որոնց հետ այս կամ այն չափով համաձայն չեմ: Որին յարգանք եւ ակնածանք ունեմ Անդրանիկ Զեյթունեանի գիտական գործի հանդէպ. հսկայական է այն, ընթերցել է տասնեակների հասնող ձեռագրեր եւ այլ միաւորներ, հաւաքել ու դասաւորել է դրանց տուեալները, որոնց միջից լաւագոյններն է կարողացել ընտրել ճշգող մեծամասնութեամբ: Չեմ անտեսել նաեւ Լ. Տէր-Պետրոսեանի ներածութիւնը, մինչեւ իսկ հատորի ձեւաւորումը, որի մասին իսկոյն ասեմ հետեւեալը. գիրքն արժանի էր լաւորակ թղթի եւ անթերի տպագրական աշխատանքի: Այսպէս. գրքի կռնակին կարգում ենք միայն մատենաշարի խորագիրը, իսկ բուն բնագրի վերնագիրը կողքի վրայ է:

#### Ա. «ՀԱՅ ՀՆԱԳՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ»

Հեղինակն է հատորի պատասխանատու խմբագիր Լ. Տէր-Պետրոսեանը: Ի դէպ, գիրքը հրատարակութեան են երաշխաւորել Գ. Վ. Աբգարեանը եւ Կ. Մ. Մուրադեանը: Այս գիտական ակնարկն ինքնին օգտակար է, բայց լիայոյս եմ, որ Աստուածաշնչի ամբողջական հրատարակութեան կամ «Գիրք Ծննդոցի» բարելաւուած վերահրատարակութեան սկզբում այսուհետեւ չի կրկնուի, որովհետեւ ոչ մի կապ չունի այդ բնագրերի հետ: Համաձայն չեմ հետեւեալ կէտերին:

1. Խուսափել օտար բառերից. էջ 7-ում հայերէն գիտական եւ դիպուկ ու հասկանալի բառերով գրելուց յետոյ աւելորդ էր, ըստ իս, բիբլիկայ, լիտուրգիկայ, պատրիստիկայ, հեքմեմետիկայ, հիստորիայ, կանոնիկայ, հագիոգրափիայ լատինական անօգուտ «տերմինների» շարանը:
2. էջ 8-ում յիշեցնելուց յետոյ, որ «Հետազոտողներից շատերը հայ թարգմանական գրականութեան դասական շրջանը սովորաբար սահմանափակում են 405-460-ական թուականներով», Լ. Տէր-Պետրոսեանը աւելացնում է. «Սակայն իրականում դասական բնոյթի թարգմանութիւնները շարունակել են կատարուել ոչ միայն ընդհուպ մինչեւ Ե դ. վերջը, այլեւ ամենայն հաւանականութեամբ գոյատեւել են նաեւ հետագայում, յունաբան դպրոցի թարգմանութիւններին գուգահեռ» (ընդգծումներն իմն են): Հակադրուելով այդ հետազոտողների կարծիքին՝ Վարագ Առաքելեանը դասական է համարում ամբողջ հինգերորդ դարի մատենագրութիւնը, իսկ մէջերը

ուած տողերի հեղինակը նրան գերազանցել է, սակայն երկուսն էլ զուրկ են գրական եւ լեզուական ամուր փաստերից, եւ վերջինիս «իրականում» եւ «ամենայն հաւանականութեամբ» հասկացութիւնները իրականում իրարամերձ են իրօք:

3. «է դարի քառասունութամբ». Մատենադարանի թ. 10680 հայերէն քառասունութամբ մասին ասում է էջ 35-ում, թէ «հնագրական տուեալներով թուագրուած է դարով»: Էջատակում նշուած է այս կարծիքը հապճեպօրէն յայտնած Ա. Մաթեոսեանի յօդուածը, բայց գիտակցաբար կամ անգիտակցաբար «մոռացուած է» Մարտիրոս Մինասեանի հակաճառող յօդուածը՝ «L'Évangéliste arm. 10680 du Maténadaran» (*Oriens christianus*, 1979, 63, 108-129, այն է՝ «Մատենադարանի թ. 10680 հայերէն քառասունութամբ»), ուր այդ ձեռագիրը համարում է Թ-Ժ, եթէ ոչ աւելի ուշ շրջանի դարերում գրչագրուած:

4. Աստուածաշնչի հայերէն բնագրի «անաղարտ» պահպանում. դրա չորս հանգամանքների նկարագրութիւնից եզրակացնելով՝ Լ. Տէր-Պետրոսեանը գրել է էջ 36-ի վերջում. «Աստուածաշնչի մեզ հասած հայերէն բնագիրը ըստ էութեան իրենից ներկայացնում է Ե դ. թարգմանութեան անաղարտ վիճակը եւ դրա շնորհիւ հանդիսանում է հայոց լեզուի հնագոյն շրջանի պատմութեան ուսումնասիրման ամենավստահելի աղբիւրը, մանաւանդ որ հնարաւորութիւն կայ նրա իրողութիւնները ստուգելու Աստուածաշնչի յունարէն բնագրի միջոցով» (եւ ընդգծեցի): Յաջողական գրչագրութիւններով փոխանցուած դարաւոր բնագրերի «անաղարտ վիճակի» մասին միտքը բոլոր դէպքերում չափազանցութիւն է եւ «ըստ էութեան» հնարաւոր էլ չէ, երբ «Գիրք Ծննդոց»-ի բնագիրը, օրինակ, պահպանուել է ԺԲ դարից սկսած գրուած ձեռագրերում (տե՛ս էջ 92 եւ յաջ.): Իսկ ինչ վերաբերում է յունարէն բնագրի միջոցով «իրողութիւնների» ստուգումների մասին, ապա նոյնիսկ աւետարանների հայերէն թարգմանութեան բնագիրը, որ համեմատաբար աւելի հշտութեամբ է իրականացուել, լիովին չի համապատասխանում յունարէն բնագրին, որի ձեռագրերն իրենց հերթին ճիւղաւորումներ ունեն: Միանգամայն իրատես է Ա. Զեյթունեանը իր հետեւեալ դիտողութեամբ. «Քննական բնագիրը կազմելու ընթացքում պէտք է հաշուի առնել եւ այն, որ հայերէն որոշ ձեռագրեր երբեմն համընկնում են յունական ձեռագրերի մի խմբի, իսկ միւսները՝ մի այլ խմբի հետ» (էջ 82), որի պատճառներից մի քանիսը տե՛ս էջ 83, իսկ ուրիշներ ամենեւին չեն համապատասխանում որոշ տեղերում: Նոյնը վերաբերում է նաեւ աւետարաններին:

5. Ս. Գրքի «առաջին» եւ «երկրորդ» թարգմանութիւն. էջ 47-ի ընթերցումից այն տպաւորութիւնն ստացայ, որ Կորիւնի, Որբենացու եւ Փարպեցու տեղեկութիւնների անյստակութեան պատճառով Լ. Տէր-Պետրոսեանը, ինչպէս նուաստս եւ անշուշտ ուրիշներ, յստակ պատկերացում չունի այն աշխատանքների իսկութեան եւ դրանց արդիւնքների մասին, որոնք կատարուել են եւ ստացուել Աստուածաշնչի թարգմանութեան «առաջին» եւ «երկրորդ» շրջանում: Նա գրում է. «Սկսում է Աստուածաշնչի թարգմանութեան երկրորդ շրջանը, որ փաստօրէն ներկայացնում է նախորդ բնագրի սրբագրումը բերուած ստոյգ օրինակների հիման վրայ» (էջ 47): Ըստ Կորիւնի հաղորդման, որ այդ էջում մէջ է բերուել, Սահակ կաթողիկոսը «Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ (ճիշտը՝ Եզնկաւ». ՄՄ.) գյառաջագոյն, գյանկարծազիւտ, գիտութեանակի զթարգմանութիւնս՝ հաստատէր ճշմարիտ աւրինակաւք բերելովք». ի՞նչ է նշանակում «հաստատէր»: Ըստ Լ. Տէր-Պետրոսեանի՝ «Նոյնը կրկնում է Որբենացին», որը, սակայն, գրել է. «Ձոր առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքաւք վերստին յարիմեալ նորոգութեամբ»: Եզնիկի անունը յիշատակուած չէ այստեղ: Միթէ՞ պատմական այս երկու տեղեկութիւնները «նոյնն» են, միթէ՞ «Կորիւնի եւ Որբենացու (. . .) տուեալները (. . .) հիմնականում համընկնում են իրար» (էջ 47). ըստ իս՝ ո՛չ, եւ հեղինակն էլ է գործածում «նախորդ բնագրի սրբագրումը» բառերը. արդ, սրբագրումը նորովի թարգմանութիւն չէ:

6. Աստուածաշնչի «ամենավստահելի» հրատարակութիւնը. «Հետազոտողների գնահատմամբ Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան ամենավստահելի հրատարակութիւնը Ջօհրապեանինն է, միակը, որ պատրաստուած է բազմաթիւ ձեռագրերի համեմատութեան հիման վրայ: Ամենայն հարագատութեամբ վերարտադրելով իր հրատարակութեան հիմք-ձեռագիրը» եւ այլն (էջ 76, ընդգծումները իմն են): Երկրորդ պնդումն իրականութեան համապատասխան չէ, քանի որ

հրատարակչին իր հիմք-ձեռագրի սխալները ուղղել է միւսների տուեալներով. նա գրել է առաջաբանում. «Իսկ որ միանգամ յայլոց գրչագրաց գոր ունէաք՝ ձեռնտու եղեն այսմ գաղափարի ի ստուգաբանութիւն կամ յուղագրութիւն եւ ի լրումն թերութեանցն» եւ այլն (էջ 6ա): Այս է պատճառը, որ տարընթերցուածների բաժնում յաճախ կարողում ենք «Յօրինակին՝ այսպէս կամ այնպէս»: Ըստ Ա. Զեյթունեանի նկարագրութեան, այդ ձեռագրի «Թանաքը մի քիչ թափած (է), որից որոշ բառեր անընթեռնելի կամ դժուար ընթեռնելի (են)» (էջ 109): Լ. Տէր-Պետրոսեանի առաջին պնդումն էլ է կաղում, քանի որ, ըստ նրա, Արսէն Բագրատունին «տարբեր ընդօրինակութիւնները» կազմել է «հայերէն Աստուածաշնչի մի ընտիր բնագիր» (էջ 76, ես ընդգծեցի). եթէ սա «ընտիր» է, ապա ինչո՞ւ նախորդը պիտի համարուի «ամենավստահելի». լուր տարընթերցուածների բաժինը չի կարող սա այնպիսին դարձնել:

7. «Երկրորդումն արիւնաց»-ի «համեմատական» բնագիր. «Կանադացի հայագէտ Կլոդ Կոքսն արդէն կազմել է Երկրորդ օրիւնաց գրքի հայերէն համեմատական բնագիրը» (էջ 76). Ի՞նչ է նշանակում «համեմատական բնագիր»: Աւելի յստակ եւ իրական բնութագրումը հետեւեալն է՝ «Այդ հրատարակութիւնը ներկայացնում է ոչ թէ Երկրորդ Օրիւնաց գրքի հայերէն թարգմանութեան քննական, վերականգնուած բնագիրը, այլ նրա ձեռագրական վիճակի ճշգրիտ վերարտադրութիւնը (diplomatic edition)» (էջ 77) Ս. Ղազարի թ. 1007 ձեռագրից վրիպակներով մեքենագրելով՝ որոշ հատուածներ իրօք օգտակար համեմատութիւնների համար այլ հայերէն ձեռագրերի հետ, որ կատարել է հեղինակը, միանգամայն բաւական էին տպագրւիւնները, ինչպէս ասել եմ «Remarques sur un texte du Deutéronome arménien» (*Le Muséon*, 1984, 97, 1-2, 81-86) («Դիտողութիւններ Երկրորդումն արիւնաց-ի հայերէն մի բնագրի մասին») գրախօսութեանս մէջ, որ Լ. Տէր-Պետրոսեանը անտեսել է:

8. Աստուածաշնչի ֆինական բնագիր պատրաստողներ. էջ 76-ի վերջում եւ 77-ի սկզբում տեղեկանում ենք, որ Երեւանում եւ արտասահմանում անհատ հայագէտներ առանձին կազմում են հայերէն Աստուածաշնչի որոշ գրքերի քննական բնագրերը: Արտասահմանում նրանցից մէկը (անուններն աւելորդ են) երբեք չի իրականացնի իր ստանձնած պարտականութիւնը, իսկ մէկ ուրիշը միանգամայն թող է այդ գործի համար: Հարց է, թէ բոլորը կարո՞ղ են իրենց տրամադրութեան տակ ունենալ անհրաժեշտ բոլոր ձեռագրերը: Ս. Գրքի յունարէն, ասորերէն կամ այլ հին թարգմանութիւնների քննական բնագրերի պատրաստումն այնքան ծանրակշիռ գործ է, որ տարբեր մասնագէտներից կազմուած գիտական հաստատութիւններ են աշխատում դրա վրայ: Արդ, այս տեսակէտից ինչպիսի՞ պայմաններում են գործում եւ գործելու են հայագէտները. կա՞ն համագործակցութիւն, անհրաժեշտ կենտրոնացում, բարերար խորհրդակցութիւններ, ընդհանուր սկզբունքներ եւ այլ անհրաժեշտ պայմաններ: Ըստ իս Երեւանը պէտք է գլխաւորի եւ ղեկավարի տարուող աշխատանքները:

Բ. ԳԻՐԳ ԾՆՆԻՈՑ

1. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ենթավերնագրերի տակ Ա. Զեյթունեանը տուել է անհրաժեշտ բոլոր կամ գրեթէ բոլոր տեղեկութիւնները. ամսօրնալի է, որ ենթավերնագրերը չեն արտացոլուել գրքի նիւթերի ցանկի կամ «բովանդակութեան» մէջ:

Յունարէն եւ հայերէն բնագրերի յարաբերութիւնները. ինչպէս ուրիշ բանասէրներ, Ա. Զեյթունեանը համեմատութիւնների միջոցով նկատել եւ մի քանի օրինակներով ցոյց է տուել, որ «“Ծնունդը” գրքի հայերէն բնագիրը ամենասերտ յարաբերութեան մէջ է Աստուածաշնչի յունարէն Եօթանասնից բնագրի Որոգիտեան խմբագրութեան ձեռագրերի հետ» (էջ 81). դա օգտակար է հայերէն ձեռագրերի տարընթերցուածների ընտրութեան համար:

«Աստերիսկուս», էջ 82 եւ այլուր. «աստեղածե (✕) նշանը՝ աստերիսկուսը». Յ. Զօհրապեանն այն կոչել է աստեղանշան, Նորայրը՝ աստղանշան, որոնք աւելորդ են դարձնում օտար տգեղ բառը:

Օգտագործուած ձեռագրեր, էջ 84. Ա. Զեյթունեանը իրեն ծանօթ 106 ձեռագրերից «որպէս համեմատելի միաւոր օգտագործել (է) մինչեւ ԺԶ դարը ներառեալ գրչագրուած 43 ձեռագրերը, ինչպէս նաեւ 18 պատառիկներ ու պահպանակներ, 9 ձեռագիր եւ մէկ տպագիր (Վաղարշապատ, 1872) Ճաշոց, առանձին դէպքերում նաեւ՝ հետագայ դարերի մի շարք այլ ձեռագրեր եւ տպագիր Աստուածաշնչեր» (էջ 84): Յաջորդ էջերում օգտագործուած ձեռագրերի նկարագրութիւնից տեղեկանում ենք, որ բոլոր ձեռագրերը բոլորգիր են, եւ հնագոյնները ԺԲ դարից են, ինչ որ պիտի նշուէր մէջբերուած տողերում: Ներածութեան մէջ մի տեղ պիտի ասուէր, թէ քննական բնագիրը որքանո՞վ է համընկնում գլխաւոր տպագիրների հետ. մեր համեմատութիւնից պարզուում է, որ յարաբերութիւնը շատ սերտ է:

Քննական բնագրի ուղղագրութիւնը, էջ 84. մեծ մասամբ դասական է, որքանով սա յայտնի է բարեբախտաբար չկան և ու օ տառանշանները: Այլընթերցուածների բաժնում չեն ընդգրկուել «այն տարընթերցուածները, որոնք վերաբերում են գրչական բացայայտ սխալներին ու վրիպակներին, բառերի գրութեան ե/է, աւ/օ, եւ/իւ, Վ/վ, աւղ/ող (նշենք նաեւ ա/ն, լ/ղ, -ն/-ով- ՄՄ.) տարբերակներին» եւ այլն: Բացի աւ/օ-ից (ա/եւ-ը չի յիշատկուել), միւսների չնշուելը ավստօսալի է, քանի որ դրանք անհրաժեշտ են դասական գրաբարի ուղղագրութեան վերականգնման եւ ուսումնասիրութեան համար: Էջ 92-ում ասուում է, թէ ԺԲ դ. բոլորգիր ձեռագրում «Անցեալ անկատար՝ եի, եիր, եր, եաք, եիք, եին (կան առանձին շեղումներ)». Ա. Մեյէի եւ ուրիշների կարծիքով դրանք են, բացի եզակի երրորդ դէմքից, որի վերջաւորութիւնն է -էր, Ե եւ Ի խոնարհումների նշուած ժամանակի դիմային վերջաւորութիւնները, որոնք յստակօրէն երեւում են Աւետարանների հնագոյն ձեռագրերում: Իսկ քննական բնագրում դրանք -է-ով են: Ուղղագրութեան մասին շատ բան կայ ասելիք եւ քննարկելիք. սա այն կէտերից մէկն է, որ կարօտ է մասնագէտների քննարկման եւ որոշման:

Քննական բնագրի կէտադրութիւնը. «Հիմնականում այսօրուայ կանոնների համաձայն (է), միայն այն տարբերութեամբ, որ ուրիշի ուղղակի խօսքը հեղինակի խօսքից անջատել ենք միջակէտով եւ շարունակել նոյն տողից, մեծատառով, առանց չակերտների» (էջ 84): Զակերտների բացակայութիւնը ոչ մի կերպ արդարանալի չէ. ընդհակառակն առաջանում են թիւրիմացութիւններ: Իսկ ինչ վերաբերում է միւս կէտադրական նշանների գործածութեանը, ապա զարմանալիօրէն նկատելի են բազմաթիւ մեղանշումներ՝ ստորակէտի բացակայութիւն կամ սխալ տեղադրում, բուլթի եւ շեշտի բացակայութիւն եւ այլն. աւելորդ են օրինակները. այս կարգի թերութիւնները կարելի է շատ հեշտութեամբ վերացնել: Արտասահմանցի հայ ընթերցողին յիշեցնում եմ, որ կիրառուել են (կամ պէտք է կիրառուէին) կէտադրութեան երեւանեան կանոնները, որ պէտք է չփոխել երեւանեան ուղղագրութեան հետ:

Յատակ վերնագրերի պակաս. էջ 86-ը վերնագրուած է «1. ԶԵՆՈՒԳՐԵՐ», որ վերաբերում է նախորդ էջի վերջին երկու տողին՝ «7. Օգտագործուած միաւորների համար պայմանական նշաններ ենք ընդունել հետեւեալները». մանաւանդ նոր էջից նախընտրելի էր «1. ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԶԵՆՈՒԳՐԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ» վերնագիրը: Սակայն սրանից աւելի կարեւոր է այն, որ ձեռագրերի գրադարանային համարներից յետոյ նշելի էին դրանց գրչութեան ժամանակները, որ գտնում ենք դրանց նկարագրութեան մէջ: - էջ 90 «8. . . . ընդունել ենք հետեւեալ պայմանական նշանները». այս 8-րդ սկզբունքը կորել է նոյն էջի սկզբում դրուած եւ մեր նշած գլխագիր ենթավերնագրի տակ. գոնէ «պայմանական նշաններ» բառերը պիտի թաւ տառատեսակով լինէին: Նոյնը վերաբերում է նաեւ էջ 99-ի «յապաւումները եւ կրճատումները» բառերին, որոնց յաջորդում են ցանկեր: Ի դէպ, շատ օգտակար կը լինէր բանասէր ընթերցողին, եթէ այս ցանկերը տպուած լինէին աւելի հաստ թղթի վրայ եւ ազատ դրուէին հատորի մէջ, որպէսզի դրանք միշտ աչքի առաջ ունենար հետաքրքրուած ընթերցողը, ինչպէս արւում է Աստուածաշնչի եւրոպական հրատարակութիւնների մէջ:

Եզնիկի մատենագրական վկայակոչութիւնների նշում. էջ 90 «Մատենագրական վրկայութիւնների» մէջ է նաեւ «Եզնիկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826». նախ՝ սա բուն 1826-ի տպագիրը չէ, քանի որ վերջինս ունի «Եզնիկայ». ինչպէս յայտնի է, անուանաթերթում այս թրուականը կրող երեք տպագիր կայ՝ բուն 1826, 1850 եւ

1863 թթ.: Սակայն կարեւորն այն է, որ գոյութիւն ունի Եզնիկի երկի քննական հրատարակութիւն՝ Փարիզ, 1959, եւ գիտական նպատակների համար պէտք է սա օգտագործել: — Ա. Զեյթունեանը էջ 138-ում նշել է «Ծնունդը»-ի այն տեղերը, որ Եզնիկը վկայակոչել է իր երկի ցոյց տրուած էջերում: Նկատելի են վիճելի կէտեր: Այսպէս. կարդում ենք «Ա 1 (194, 260)». Ծն Ա 1 «Ի սկզբանէ արար Աստուած գերկին եւ գերկիր», իսկ (1826°) էջ 194-ում՝ «Արար Աստուած գերկինս եւ գերկիր և զամենայն որ ի նոսա», որի աղբիւրն է, ըստ Լուի Մարիէսի եւ Ա. Ա. Աբրահամեանի, Ծն Ա 1, իսկ ըստ Նորայրի անտիպ նիւթերի՝ Սղմ ՃՈՆ 6. «որ արարեր գերկինս եւ գերկիր, զծով եւ զամենայն, որ ի նոսա», որն անցել է Գծ Դ 24-ին: — Նշուած է նաեւ «Թ 6 (248–249)». այս էջերում կարդում ենք. «Ո՛ր զու գրեցեր յաւրէնսդ քում՝ թէ որ սպանանիցէ, մեռցի. և որ հեղու զարիւն արդարոյ, հեղցեն զարիւն նորա», իսկ Ծն Թ 6-ում՝ «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա». բնագրերը նոյնը չեն, եւ Առակք Զ 17-ն էլ ունի նման միտք: — Նշուած է «Ժէ 14 (268)». այս էջում կայ «Որ ոչ թլփատեցի, և ոչ զաբաթս պահեսցէ, մեռցի», իսկ Ծն Ժէ 14-ում՝ «Արուն անթլփատ, որ ոչ թլփատեցէ զմարմին անթլփատութեան իւրոյ յաւուր ութերորդի, սատակեցի անձնն այն յազգէ իւրմէ, զի ցրեաց զուխտ իմ». երկու բնագրերը նոյնը չեն: — Նշուած է «ԺԹ 1 (94)». սա ուղղակի վկայակոչութիւնն է, այլ՝ «անուղղակի վկայակոչութիւններ»-ից մէկը, որպիսիք նշել է Ա. Զեյթունեանը նոյն տեղում, մոռանալով Բ 15 (188)-ի «Եւ զնա ի դրախտին փափկութեան» բառացի վկայակոչութիւնը:

2. «ԾՆ ՆՈՒՆ ԴԻՔ»-Ի ԲՆԱԳԻՐԸ

Սա հատորի ամենաէական մասն է եւ գրաւելով բոլորիս ուղղութիւնը՝ պէտք է «բարակ մաղէ անց կացուի», շտկուի, բարելաւուի: Տպագրուելուց առաջ քննարկուե՞լ է արդեօք Երեւանի գրաբարագէտների եւ սուրբգրային հարցերի մասնագէտների կողմից: Բնագիրը կազմողը զգուշացրել է, որ աստղակիր բառերը ծանօթագրուած են. ծանօթագրութիւնները հատորի վերջում են, ուր նախընտրելի էր, որ գլուխների միջեւ յստակ բաժանում լինէր: Ուրախալի է, որ տարընթերցուածների բաժինը էջատակում է, եւ ոչ թէ վերջում, ինչպէս Նարեկացու «Մատեան ողբերգութեան» քննական հրատարակութեան մէջ է (Երեւան, 1985) փոստալիտէն: — Ցանկալի էր, Ա. Զեյթունեանը ասէր, թէ բնագիրը կազմելիս մէկ ձեռագրի է հետեւել, թէ՞ բոլոր ձեռագրերի տուեալներից ընտրել է լաւագոյն ընթերցուածը: Ցամենայն դէպս, իր կողմից ոչ մի սրբագրութիւն, որ առնուած պիտի լի՛նէր [ ]-ի մէջ, չնկատեցի բնագրում:

Ստորեւ համարակալելով նշում եմ ղիտողութիւններին մեծագոյն մասը: Բ նշ. Ա. Գրքի 1860-ի տպ, Գ նշ. 1895-ի տպ:

1. Ա 2 եւ ամենուր Աստուծոյ փիւ Աստուածոյ. ըստ Ա. Մեյէի եւ ուրիշների՝ դասականը երկրորդ ձեւն է, ինչպէս միշտ գրուած է աստուածոց. ձ-ի ալ յապաւման Աստուծոյ ընթերցումը միջնադարեան է:
2. Ա 6 «ի մէջ ջրոցդ . . . ի մէջ ջուրցդ եւ ջուրց». ջրոցդ-ի փիւ ձ-ն ունեն ջուրցդ. կրկնակ նման ձեւերի դէպքում է, որ ընտրութիւնը դժուար է լինում, սակայն բնագիրը կազմողը չի ասել, թէ ի՛նչ հիման վրայ է նախընտրել մէկը կամ միւսը: Բացառաբար այս դէպքում յիշեցրել է ծան. մէջ Եդ. Աղայեանի այն կարծիքը, թէ ջուրցը «հին» ձեւն է, իսկ ջրոցը՝ «նոր», թէեւ երկուսն էլ դասական են. «Հինը եւ նորը դեռեւս զուգահեռաբար գործածուած էին»: Ըստ Ա. Մեյէի, «Ձուր բառը նշանակում է «ջուր», եւ ջուրք-ն է, որ նշանակում է «ջրային տարածութիւններ», գերմ. Gewässer» (Ա. Մեյէ, Հայագիտական ուսումնասիրութիւններ, 1976, 402): Ամբողջ Ա. Գրքում ունենք յոգնակի այդ երկու ձեւերը: Գնարկելի կէտ է:
3. Ա 6 «Եւ ասաց Աստուած. Եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ եւ Եղիցի մեկնեալ ի մէջ ջրոցդ եւ ջրոց: Եւ եղեւ այնպէս»: Նախընտրելի էր, որ այստեղ եւ այլուր ուրիշի ուղղակի խօսքը դրուէր չափերտների մէջ. սակայն գլխաւորն այն է, որ ձ-ն ունեն մեկնել անորոշ դերբայը, իսկ Ա. Զեյթունեանը նախընտրել է (անշուշտ որոշ ձեռագրերի) մեկնեալ անցեալ դերբայը ու ծան. մէջ գրել. «Գերագասելի համարեցինք բնագրում ունենալ մեկնեալ ձեւը». եթէ նրա մտքում հաս-

տատութիւն ուղղականը եղիցի մեկնեալ-ի ենթական չէր, ապա (,) պէտք էր 2-րդ եւ-ից առաջ, ըստ կէտադրութեան երեւանեան կանոնների. ուստի էլ եւ երրորդական նորագոյն թարգմանութիւններում կարդում ենք «եւ թող բաժանի», որին կը համապատասխանէր հայ. մեկնել անորոշ դերբայն իբրեւ նպատակի պարագայ, որպիսին առատ է այս բնագրում. հմմտ. Ա 14 «եղիցին. . . մեկնել», Ա 15 «եղիցին. . . ծագել», Ա 17–18 «եղ. . . լուսատու լինել յերկիր եւ իշխել. . . եւ մեկնել»: Ա 6-ի երկրորդ եղիցի-ն գուցէ եւ հետագայի յաւելում է:

4. Ա 11 բղխեցէ, ձ-ն բխեցէ. Արմ. բառ.՝ «Բուխ (յետին ուղղագրութեամբ բուխ)»: Նախընտրելի է բխեցէ-ն:
5. Ա 11, 12 «որոյ սերմն իւր». բնագրում այլուր եւս նկատելի են այսպիսի ասորաբանութիւններ, ինչպէս մէկ անգամ Եզնիկի երկի ձեռագրում՝ «որոյ սերմն նորա դեղ է». պէտք է քննել, թէ սրանք դասական են արդեօք. ըստ իս՝ ոչ:
6. Ա 14, 16 եւ այլուր տուրնջեան. ըստ «Քերականութիւն հայկազնեան լեզուի», էջ 478, «Յաճախ կը գրուի տուրնջեան՝ փոխանակ տուրնջեան», որ, ըստ իս, միակ դասականն է:
7. Ա 16 «գերկուս լուսաւորսն». համոզուած եմ, որ անգոյ\* երկուս-ի բացակայութեան դէպքում երկուս յոգնակիւմ հայցականը միջնադարեան է. դասական երկու հայցականը դեռ երեւում է դասական բնագրերում. հմմտ. ԺԹ 15 «գերկուս դստերս քո», իսկ երկու ձ գերկու. ԺԱ 20 «ամս հարիւր երեսուն եւ երկու», ԺԱ 25 «ամս հարիւր քսան եւ երկու»:
8. Ա 16 «գերկուս լուսաւորսն զմեծամեծս». 11 ձ մեծամեծս, առանց գ- նախդրի կրկնութեան, որ նախընտրելի է:
9. Ա 21 «զամենայն շունչ գեռնոց կենդանեաց», մէկ ձ շունչս, որ նախընտրելի է. հմմտ. Ա 20 «գեռունս շնչոց կենդանեաց»:
10. Ա 27-ից մինչեւ Ծ 15-ը տնահամարների սկզբում դրուել է նաեւ մի այլ գլխակարգութիւն, հաւանաբար հնագոյնը, Ա-ԾԸ, սակայն Ա. Զեյթունեանի ներածութեան մէջ չգտայ կամ չնկատեցի որեւէ զգուշացում: Յաճախ շփոթելի է արդի գլխակարգութեանը հետ:
11. Ա 29 ախաւադիկ. 1 ձ աւադիկ. այստեղ եւ այլուր, ինչպէս եւ -ա- ու -ն- արմատներով ձեւերում ո՞րն է դասականը՝ -հ- ու -ն, թէ՞ առանց դրան ձեւը. խմբովին որոշուելիք կէտերից է:
12. Ա 29–30 «Եւ ասաց Աստուած. Ահաւադիկ ետու ձեզ զամենայն խոտ սերմանելի. . . երկրի: Եւ ամենայն փայտ. . . , ձեզ լիցի ի կերակուր: 30 Եւ ամենայն գազանաց երկրի. . . եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի, որ ունիցի շունչ կենդանի եւ ամենայն խոտ դալար ի կերակուր:». Բ եւ Գ տպ-ներում, ինչպէս նաեւ ուրիշ թարգմանութիւնների մէջ ամենայն փայտ-ն էլ ետու-ի ուղիղ խնդիրն է, ինչպէս տրամաբանական է, եւ իզուր չէ, որ երկու տպ-ները եւ ձ-ն ունեն զամենայն փայտ, որից առաջ տպ-ներն ունեն (,): Իսկ ձեզ բառից առաջ Փրանս. թարգմանութիւններն ունեն չէզոք սեռի մի ցուցական դերանուն, որ ներկայացնում է «զամենայն խոտ»-ը եւ «[գ]ամենայն փայտ»-ը: 30 տնահամարից առաջ եւ (:) չէի դնի, այլ (,), ինչպէս Բ-ն, քանի որ 29-ի ետու-ն վերաբերում է նաեւ 30-ի մատուցման անուղղակի խնդիր տրականներին. Փրանս. թարգմանութիւնները վերջակէտ են դրել, բայց ներմուծել «տալիս եմ» բայը, որ, ըստ մէկի տեղեկութեան, բոլոր երբ. ձ-ն չունեն: Այս տան կենդանի բառի վրա կը դնէի ('), իբրեւ ետու բայի զեղչման նշան, եւ կը ջնջէի դրան յաջորդող եւ-ը, որ չունի Գ տպ-ը, եւ յաջորդող ամենայն խոտ-ը կը դարձնէի [գ]ամենայն խոտ, որպէս զեղչուած ետու-ի ուղիղ խնդիր, ինչպէս ունենք տ. 29-ում: Մի վերջին ուղղում. տ. 30-ի որ սողին յոգնակի կողքին որ ունիցի եզակին անընդունելի է, քանի որ յարաբերեալը յոգնակի է: Բացի այդ, գուցէ [եւ] էր պէտք 2-րդ յարաբերականից առաջ: Ի դէպ, քանի որ էջերի բնագիրը տողատուած չէ, յաճախ անկարելի է լինում որոշել ձ-ի տարընթերցուածները. այս ձեւը պէտք է բարելաւել:
13. Ա 31 «Ետեւ Աստուած զամենայն, զոր արար, եւ հաս բարի եմ յոյժ». զամենայն եզակի դերանունան հետ կասկածելի է եւ յոգնակին, որ սկզբում գուցէ չկար կամ [է] էր:
14. Բ 13 Եթովպացոց. ձ-ն բազմաթիւ տարբերակներից նախընտրելի են այն ձեւերը, որոնք -վ- չունեն, քանի որ -ով-ը յուն. ω-ի տառադարձումն է, որ չկայ Αἰθιοπιάς-ում:
15. Բ 16 «յամենայն ծառոց, որ է ի դրախտիդ». յոգնակի յարաբերելի դէպքում յարաբերական դերանունան թուային համաձայնութիւնը ուղղական եւ հայցական հոլովներում կնճռոտ հար-

ցերից մէկն է, քանի որ դասական բնագրերում մերթ համաձայնել է մերթ՝ ոչ: Ըստ իս, դասական գրաբարում դեռեւս համաձայնութիւնը լրիւ էր, քանի որ ձձ-ը դեռեւս պահպանել են համաձայնութեան բազում դէպքեր: Բայց այս նախադասութեան մէջ եզակի է-ն անընդունելի է. դա կա՛մ աւելորդ է, հմմտ. «. . . քան զամենայն գաղանս, որ՝ ի վերայ երկրի» (Ծն Գ 1). յայտնի է, որ անուանական նախադասութիւնը օտար չէ դասական հայերէնին. կա՛մ էլ պէտք էր ընտրել ձձ-ի իցեմ եւ եմ տարբերակներից մէկը, ինչպ. Գ 1 «Յամենայն ծառոց, որ իցեմ ի ներքս ի դրախտի այդը, մի ուտիցէք»:

16. Բ 24 «Եղիցին երկուքն ի մարմին մի». երկուք ուղղականը անընդունելի է դասական գրաբարում. ձձ ունեն երկոքին, երկոքին, երկոքեան եւ երկոքեանն, որոնցից նախընտրում եմ ին վերջածանցովը, քանի որ կայ նոքին, բայց ոչ՝ \*նոքեան. Բ 25 «եւ էին երկոքեան մերկ»:

17. Գ 2-3 «Ասէ կինն ցաւն. Ի պտղոյ ծառոց դրախտի կերիցուք, Յ բայց ի պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին, ասաց Աստուած. Մի ուտիցէք ի նմանէ. . .». օձը Եւային դիմելիս ասել է Գ 1-ում. «. . . որ իցեն ի ներքս ի դրախտի այդը, մի ուտիցէք», որի այդը-ը՝ -դ յօդի համազօրը, միանգամայն տեղին է, քանի որ Եւան դրախտի բնակիչ է. ուտի եւ սա, եթէ հայ կին լինէր, պիտի ասէր ի դրախտի[ս], որ ունի մէկ ձ. նոյն պատճառով նա պիտի ասէր նաեւ «ի մէջ դրախտի[ս]», որ ոչ մի ձ-ում չկայ, ըստ տողատակի. Գ 10-ում Ադամը՝ դրախտի բնակիչ, Աստուծոն ասում է՝ «Լուայ զձայն քո ի դրախտի աստ», -ս յօդին փոխարինող աստ-ով:

18. Գ 7 «բացան աչք երկոցունց». այս եւ նման ձեւերից նախընտրում եմ առանց -ց յոգնակերտի հոլովածեւերը, այստեղ՝ երկոցունց-ը, որ կայ 10 ձձ-ում. նոյնպէս Զ 2 յամենեցունց, բայց երկու ձձ ունեն լաւագոյն յամենեցուն ձեւը:

19. Գ 14 «Եւ ասէ տէր Աստուած ցաւն. Փոխանակ զի արարեր դու գայն, անիծեալ լիջիր. . .». երկու ձձ ունեն գայդ ճիշտ բառը. հմմտ. Գ 13 «Ասէ տէր Աստուած ցկինն. Զի՞նչ գործեցեր գայդ» եւ Դ 10 «Ասէ Աստուած (ցկային). Զի՞նչ գործեցեր գայդ»:

20. Գ 24 «Եւ եհան զԱդամ եւ բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան եւ հրամայեաց քերթէից եւ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց». ծան.՝ յուն. եւ հայ. թարգմանութիւնները խաթարուած են, եւ եբր. բնագիրն ունի «Արտաբսելով Ադամին, նա շրջադարձ այրող սուր ունեցող քերթիքին տեղաւորեց» եւ այլն: Ըստ Գ տպում Գ 24-ի ծան.՝ եբր. բնագրի իմաստն է «բնակեցոյց յանդիման Եդեմայ զքերթէս եւ զբոցեղէն սուրն», այսինքն երկու պահակ նշանակեց, ինչպէս ունեն Փրանս. թարգմանութիւնները: BJ-ի իմաստն է՝ «պահակ կանգնեցրեց քերթէներին եւ փայլակնացայտ սրի բոցը». OSTY-ն ունի «պահակ կանգնեցրեց քերթէներին եւ պտտուող սրի բոցը». TOB «պահակ կանգնեցրեց Գերթէներին. . . շանթահար թրի բոցի հետ» եւ ծան.՝ «Բառացի՝ «ինչպէս նաեւ գետնահար թրի բոցի հետ»»: Բերուած չորս վկայութիւնների համաձայն՝ Աստուած երկու պահակ է նշանակել, եւ ոչ թէ միայն «շրջադարձ սուր ունեցող քերթիքին», ինչպէս Ա. Զեյթունեանն ընկալում է եբր. բնագիրը: Նա գրել է նաեւ. «Բացի այդ, անհասկանալի է ու քերականորէն չկապակցուած «հրամայեաց քերթիքից (իր բնագրում՝ «քերթէից». ՄՄ.) եւ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս»: Քերականորէն ամէն ինչ գուցէ հարթ ուէր, եթէ լինէր «հրամայեաց քերթէից [ ] բոցեղէն սրոյ. . .», որի «քերթէից բոցեղէն սրոյ» բառերը թերեւս կը նշանակէին «բոցեղէն սրի քերթէներին», որը դարձեալ չէր համապատասխանի եբր. բնագրի «սուր ունեցող քերթէին» մտքին: Դժուարութիւն յարուցող է նաեւ հայ. թարգմանութեան շուրջանակաւ բառը, որ Բ տպում մակբայաբար վերաբերում է պառնել բային՝ «. . . եւ բոցեղէն սրոյ՝ շուրջանակաւ պահել. . .»: ՆՉԲ-ում այս բառը մակբայ է, բայց նրա գոնէ մէկ վկայութեան մէջ՝ «(եւ շինեցաւ) ելանելի շուրջանակաւ» (Գ Թագ Զ 8), որ Փրանս. թարգմանուել է «դարձարձիկ սանդղակ», որոշիչ է. ուստի «սրոյ շուրջանակաւ» բառակապակցութեան մէջ էլ այս բառը որոշիչ է եւ բութով գատուելու չէ սրոյ-ից: Այսպիսով «անհասկանալի եւ քերականորէն չկապակցուած» բան չեմ նկատում Գ 24-ում:

21. Դ 1 յղացաւ, ինչպէս բնագրում այլուր. ձձ ունեն յղեցաւ. սա էլ վերջնականապէս որոշուելիք կէտերից է:

22. Դ 2 Հարել, ծան.՝ «Ընդունել ենք Եօթնասնից ձեւը՝ ΑΒΕΛ». սակայն դասական տառադարձութեամբ պիտի լինէր Հարել, այսինքն յուն. λ-ը բոլոր յատուկ օտար անուններում, ինչպէս Ժ 2 11 Իսմայէլ. ձձ ունեն Հարել եւ Իսմայէլ (ինչո՞ւ ոչ Իսմայէլ):

23. Դ 5 ոչ նայեցաւ, իսկ 4-ում հայեցաւ. տ. 5-ում էլ ձձ ունեն ոչ հայեցաւ. ի՞նչ հիման վրայ է ընտրութիւնը, որն իրօք դժուարին է:

24. Դ 8 «ցՀաբել եղբայր իւր». Ժ դ. մագաղաթեայ երկաթագիր մի պահպանակ «ցեղբայր իւր ցՀաբել», այսինքն բացայայտիչն ու բացայայտեալը նոյն նախդիրն ունեն. ամբողջ բնագրում այս բառակապակցութեան նախդիրը մերթ կրկնուել է, մերթ՝ ոչ. պէտք է կարենալ որոշել, թէ դասական գրաբարում էլ չկար բացայայտ կանոն. ըստ իս կանոնաւորը նախդրի կրկնութիւնն էր: Որոշիչ յատուկ անունը պէտք է շփոթել սրա հետ:

25. Դ 10 «բողոքէ առ յիս». առ յ-ն ընդհանրապէս եւ միանգամայն մերժելի է, առաւել եւս՝ այստեղ, ուր տպ-ներն ունեն առ իս ճիշտը: Ըստ Համաբարբառի, ՀԿ-ում ունենք բողոքել առ եւ հայց., իսկ ՆԿ-ում՝ բողոքել ի եւ հայցական:

26. Դ 11 «Եւ արդ, անիծեալ լիջիր. . .»: 12 Զի գործեցես զերկիր, եւ ոչ յաւելցէ տալ քեզ զզաւրութիւն իւր. ծան.՝ «Այստեղ զի-ն ունի յորժամ-ի իմաստ». յուն. ὅτι, որ բազմիմաստ է, բայց առաջին նշանակութիւնն է «որովհետեւ, քանզի». ՆՉԲ-ն չունի զի «յորժամ». Փրանս. թարգմանութիւններն ունեն այստեղ «եթէ» կամ «եբք», բայց կարծում եմ, որ մերոնք ըմբռնել են որպէս «քանզի» իմաստով:

27. Դ 17 Ենոք, ձձ Ենոք, որ յուն. Ενωχ-ի դասական տառադարձութիւնն է. այս վերաբերում է նաեւ յուն. -ω-ի բոլոր -ով- տառադարձութիւններին. Դ 26-ում բնագիրն ունի Ենոպս ճիշտ ձեւը, յուն. Ενωσ:

28. Դ 24 Թէ «եթէ» իմաստով. ձձ ունեն եթէ, որ նախընտրում եմ այս նշանակութեամբ: Բայց ի՞նչ հիման վրայ մերժել հնագոյն ձեւագրերի Թ-ե ու եթ-ե ձեւերը, որոնք հնագոյն ուղղագրութիւնն են պահել:

29. Դ 24 ի Կայեմէ. երեք ձ ունեն «Կայինի (նչ[անով] ձ[ախ] լ[ուսանցքում] ի > ե)». որպէս ընդհանուր դիտողութիւն պիտի ասեմ, որ նախդրաւոր բառերը տողատակում պէտք է նշուէին իրենց նախդրով, ինչպէս այստեղ, որպէսզի յստակ հասկացուէր, որ երեք ձձ ունեն ի Կայինի (բայց գուցէ եւ սխալ եմ մեկնաբանում տողատակը, այսինքն ունեն Կայինի փխ ի Կայեմէ): Միւս ընդհանուր դիտողութիւնս այն է, որ տողատակի նշումները միշտ չէ, որ յստակ են. այստեղ Կայինի բառի երկու ի-երից ո՞ր մէկն է լուսանցքում սրբագրուել է: Երկու այլ ձձ ունեն ի Կայինէ, որն, ըստ իս, ճիշտ ձեւն է, քանի որ բնագրում այս առաջին մարդասպանի անունը Կային է, ինչպէս առաջին անգամ յիշատակուելիս՝ «Ծնաւ զԿային» (Դ 1): Ինչպիսի՞ հնչիւնափոխութեան հիման վրայ ի- ձայնաւորը պիտի փոխարինուէր -ե-ով, այսինքն՝ Կային - Կայեմի եւ ի Կայեմէ:

30. Դ 25 «Անուանեաց զանուն նորա Սէթ, ասէ, Զի յարոյց ինձ Աստուած զաւակ այլ փոխանակ Հաբելի, զոր սպանն Կային»: Ծան.՝ «Աւէ-ն այստեղ եւ մի շարք այլ տեղերում ունի որք նշանակում է-ի իմաստ». դասական գրաբարում ասել բայը չունի «նշանակել» իմաստը, որի համաձայն Սէթ-ը պիտի նշանակէր Զի-ով սկսուող նախադասութիւնը. ասէ բայածեւը պարզապէս նշանակում է «ասում է», ինչպէս ունի Փրանս. մէկ թարգմանութիւն, լատ.՝ «ասելով», ռուս.՝ «ասաց նա» եւ այլն. նման դէպքերում բառախաղ կայ յատուկ անուան եւ տրուած մեկնաբանութեան միջեւ, այստեղ՝ Սէթ (եբր. շէթ) եւ եբր. շաթ «չնորհեց»: Կականն այն է, որ բնագրի մի քանի տեղում այսպիսի մեկնութիւն-նախադասութիւնների գի-ն գլխագրով չէ, էլ չեմ խօսում չակերտների բացակայութեան մասին (տե՛ս ԻԶ 22, ԻԹ 32, Լ 24):

31. Դ 25 Սէթ, 26 Սեթայ, ինչպէս հանդիպում են Մովսէս - Մովսեսի, Իսրայէլ - Իսրայելի եւ այլն. ի՞նչ հիման վրայ է- ձայնաւորը պիտի հերթագայի -ե-ի հետ. այս անգոյ հնչիւնափոխութեան փոխարէն եւ կարծում եմ, որ այս եւ նման յատուկ անունները դասական ուղղագրութեան համաձայն -ե- ունէին ուղղականում, որը պահպանուում է թեք հոլովներում. յուն. ε եւ η գրերի դասական տառադարձութիւնը վերջնականապէս որոշուած չէ:

32. Դ 26 «Անուանեաց զանուն նորա Ենոպս: Նա յուսացաւ. . .». մէկ ձ ապ, որն (առանց -յ-ի) քերականորէն յարմարն է, ինչպ. Ե 29 «Անուանեաց զանուն նորա Նոյ, ասէ՝ Սա հանգուցէ. . .»:

33. Զ 2 «զի գեղեցիկ էին». երեք ձձ գեղեցիկ, մէկ ձ գեղեցիկք, որն ուղղելի է գեղեցիկք. ի՞նչ հիման վրայ մերժել յոգնակի ստորոգելիական վերադրի թուային համաձայնութիւնը, որ նոյնպէս դասական գրաբարի քերականութեան չլուծուած հարցերից է. դասական բնագրերի ձեւագրերում:

ուսնենք մերթ լրիւ համաձայնութիւն, մերթ եզակի. հաւանաբար յոգնակիրն է դասականը, քանի որ արդի եզակին է կանոնաւորը:

34. 2 2 «կանայս յամենեցունց, գոր ընտրեցին», մէկ ձ գորս. Ե 5 «աւուրք Ադամայ, գորս եկեաց». շատեր համոզուած են, թէ դասական գրաբարում յարաբերական դերանունը մերթ համաձայնում էր, մերթ՝ ոչ իր յարաբերակալի յոգնակի թուին, երբ պիտի դրուէր ուղղական կամ հայցական. այսպէս 2 4 «նոքա էին սկայքն, որ յաւիտենից արք անուանիք», իսկ երեք ձձ որք: Ըստ իս, դասական գրաբարում համաձայնութիւնը լրիւ էր դեռ եւս:

35 2 17 «Եւ ինչ որ իցէ ի վերայ երկրի, սատակեսցի». 1 ձ որ ինչ նախընտրելի է, ինչպ. ԺԼ 12 որ ինչ, ԺԼ 17 գոր ինչ:

36 2 20 «մտանիցեն առ քեզ կերակրել ընդ քեզ, արու եւ էզ», ծան.՝ «Հ[այերէն] բոլոր հրատարակութիւնները (նաեւ ձձ) կէտադրական որեւէ նշան չունեն քեզ եւ արու բառերի միջեւ, որով խաթարում է նախադասութեան իմաստը». սակայն 1860-ի (Բ) եւ 1895-ի (Գ) տպւները (՝) ունեն քեզի վրայ, իսկ 1805-ի տպւր ոչինչ չունի: Ի դէպ, նախընտրելի էր, որ նպատակի պարագայ անորոշ դերբային նախորդող բառի վրայ դրուէր (՝) այստեղ եւ բնագրում այլուր:

37. է 11, Ը 2 աղբիւրք, իսկ բազմաթիւ ձձ աղբիւրք, որ, ըստ իս, դասականն է, կամ աղբիւրք:

38. է 14 «ամենայն անասուն ըստ ազգի իւրեանց եւ ամենայն սողուն շարժուն ի վերայ երկրի ըստ ազգի իւրեանց եւ ամենայն հաւ թռչուն ըստ ազգի իւրում. . .». անասուն եւ սողուն եզակիները (որոնք յոգնակի են Փրանս. թարգմանութիւններում) անյարիր են իւրեանց յոգնակիի հետ. ձձ ունեն անասունք, որ կանոնաւոր կը լինէր, բայց ոչ՝ սողունք, որ սպասելի էր. յայտնի է, որ ամենայն-ը կարող է նշանակել «ամեն մի» եւ «բոլոր» ըստ որոշակի թուի: Միւս կողմից՝ ձձ ունեն իւրում եզակին, որ նոյնպէս կանոնաւոր կը լինէր անասուն եւ սողուն եզակիների հետ, ինչպէս բնագրում կայ հաւ. . . իւրում:

39. է 22 յոնգունն ձեւը նախընտրելի չէ ի ոնգունն կանոնաւորի փխ, որ չունեն ձձ:

40. է 23 «որ ընդ նմա էին». երկու ձձ ընդ նմայն, որի -ն յօղը միանգամայն կանոնաւոր է յարաբերականի պատճառով:

41. է 9 «ջուր դեռ ունէր զամենայն զերեսս երկրի». Լաւագոյն է ջուրն, որ կայ 11 միաւորում, քանի որ է 7 ջրոյն, 8 ջուրն, -ն յօղով:

42. Ը 9 «Առ զնա անդէն առ իւր ի տապանն անդր». ձձ «ի տապան անդր» եւ նախորդ տողում նոյնպէս, որ ճիշտն է, քանի որ -ն յօղ եւ դրան փոխարինող անդր-ի համատեղ գործածութիւնը անհարկի աւելադրութիւն է:

43. Ը 16-17 «Եւ ի տապանէ այտի դու եւ կին քո եւ որդիք քո եւ կանայք որդւոց քոց ընդ քեզ 17 եւ ամենայն գազանք, որ են ընդ քեզ, եւ ամենայն մարմին ի թռչնոց մինչեւ ցանասունս: Եւ զամենայն սողուն զեռուն երկրի հան ընդ քեզ, եւ զեռասցեն ի վերայ երկրի: Եւ անցեցք եւ բազմացարուք ի վերայ երկրի». ծան.՝ «Հ[այերէն] ձձ-ում եւ տպագրիւններում այս նախադասութիւնը քերականորէն տեսքի չի բերուած: Կամ այս գլխի 16-րդ տան նախադասութեան վերջակէտը [՝] պիտի հանել, որ պէտքի էր բայը վերաբերի նաեւ եւ ամենայն գազանք, որ են ընդ քեզ, եւ ամենայն մարմին ի թռչնոց միջեւ ցանասունս հատուածին, կամ էլ 17-րդ տան ցանասունս բառից յետոյ եղած վերջակէտը ջնջելով՝ ամենայն գազանք-ը եւ ամենայն մարմին-ը դարձնել հայցական, որպէսզի հան ստորոգեալի գործողութիւնը անցնի նաեւ ամենայն գազանք-ին ու ամենայն մարմին-ին, ինչպէս տալիս է Յ(ուսարէնը): Հ բնագիրը ըստ Յ-ի ձեւելու համար Հ ձձ այդ հնարաւորութիւնը չեն տալիս: Հնարաւոր միակ բանն այն էր, որ 16-րդ տան վերջակէտը վերացուէր, ինչպէս եւ արել ենք»: - «16-րդ տան նախադասութեան վերջակէտը» չկայ Բ եւ Գ տպւներում, այլ 1805-ի տպւում է «. . .քեզ: Ե. . .»: Սակայն այդ վերջակէտի ջնջմամբ 16-ի ե՛լ հրամայականը տարածուել է նաեւ 17-ի գազանների, թռչունների եւ անասունների վրայ էլ, իսկ 17-ի հա՛ն հրամայականը վերաբերել է միայն «զամենայն սողուն զեռուն»-ին. այս բաժանումը տրամաբանական չէ. հա՛ն-ը վերաբերելու է անշուշտ բոլոր ոչ մարդ արարածներին: Արդարեւ նկատենք, որ է 1-ում Աստուած Նոյին կարգադրում է այսպէս. «Մ՛ն՛ւտ դու եւ ամենայն տուն քո ի տապանդ. . . 2 եւ ամենայն անասնոց սրբոց մ՛ն՛ծ ընդ քեզ. . .». արդ, Ը 16-ում մ՛ն՛ւտ-ին հակադրուած է ե՛լ-ը, եւ մ՛ն՛ծ-ին հա՛ն-ը: Նկատենք նաեւ, որ Ը 18-ում գատ են «ել Նոյ եւ կին նորա եւ որդիք նորա եւ կանայք

որդւոց նորա ընդ նմա» մի կողմից, ու միւս կողմից՝ 19 «Եւ ամենայն գազան եւ ամենայն սողուն շարժուն եւ ամենայն թռչուն յերկրէ ըստ ազգի իւրեանց ելին ի տապանէ անտի»: Ըստ իս, տ. 17-ի հա՛ն-ը վերաբերում է նաեւ նոյն տան մէջ թռուարկուած բոլոր կենդանիներին: Այսպիսով Ա. Զեյ-թունեանի առաջին առաջարկն ըստ իս ընդունելի չէ: Մնում է նրա երկրորդ առաջարկը, որ է՝ հետեւել յուն. բնագրին, ինչպէս ունեն լատ., ռուս. եւ Փրանս. թարգմանութիւնները, բայց դրան հետեւելու համար «հայերէն ձեռագրերը հնարաւորութիւն չեն տալիս»: Իրա համար հարկաւոր է, որ հայցական լինեն (որպէս հա՛ն-ի ուղիղ խնդիրներ) տ. 17-ի ամենայն գազանք-ը եւ ամենայն մարմին-ը: Երկու ձձ գազանք-ի փխ ունեն գազան եզակին, որ կարող է ընդունելի լինել յոգնակիի փխ, եւ ձձ չունեն որ-ին յաջորդող եւ-ը, որով ստացւում է անուանական նախադասութիւն. մնում է ամենայն-ը դարձնել [զ]ամենայն: Միւս կողմից՝ ամենայն մարմին-ի որոշիչը մէկ ձ-ում գամենայն է: Այսպիսով կը ստացուէր. «17 Եւ [զ]ամենայն գազան [ ], որ [ ] ընդ քեզ, եւ [զ]ամենայն մարմին ի թռչնոց մինչեւ ցանասունս, եւ զամենայն սողուն. . . հա՛ն. . .»: Պիտի նկատենք, որ տ. 17-ի գեռացեմ-ը նշ. «վխտալ, եռալ» եւ միայն նոյն տան «զամենայն սողուն զեռուն»-ին չի վերաբերում, այլ՝ բոլոր կենդանիներին եւ թռչուններին:

44. Ը 19 «Եւ ամենայն գազան եւ ամենայն սողուն շարժուն եւ ամենայն թռչուն յերկրէ ըստ ազգի իւրեանց ելին ի տապանէ անտի». յերկրէ բացառականի փխ, որի շարահիւսական պաշտօնը ինձ յստակ չէ իմաստի տեսակետից, միւս թարգմանութիւններն ունեն «երկրի վրայ»:

45. Թ 1 արհնեսաց, որ վրիպակ է փխ արհնեսաց:

46. Թ 10 «ի թռչնոց եւ յանասնոց եւ յամենայն գազանաց (. . .) եւ ամենայն անասնոց երկրի». ձձ ամենայն անասնոց, որ ճիշտն է ըստ նախորդ բացառականների:

47. Ժ 3 Թորգումա, յուն. Θοργαμα կամ Θεργαμα. հայերէն թարգմանութեան հայացումը ոչ մի ձեւի չի համապատասխանում. ճիշտը երեւի Թորգամա է:

48. Ժ 10 Բաբելոն, ձձ Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն, Բաբելոն. ըստ Քեր. հայկազն. լեզ., էջ 488, Ժ, «Ղ գրին նախընթաց ի ձայնաւորը շատ անգամ է կը գրուի, եւ երբեմն իւ: Ինչպէս (. . .) Բաբելոն կամ Բաբելոն» (էջ 489) եւ ծան. մէջ՝ «Նախնեաց դատը լիւնի դարձուելէն ետեւ՝ ալ տեղի չունի է փխի ի (. . .) նոյնպէս Բաբելոն, որ վերոյիշեալ կանոնաւ Բաբելոն եղած էր, լիւնով գրուելու սկսելէն ետեւ հարկ էր որ մնար Բաբելոն, եւ ոչ թէ Բաբելոն, Բաբելացի, ինչպէս յառաջներն տգիտութեամբ սկսուած եւ ցայսօր ընդունելի եղած է»: Քանի որ յուն. Βαβυλων է, ապա դասականը եղած պիտի լինի Բաբելոն:

49. ԺԱ 1 «Եւ էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն». մէկ ձ երկրի, որ հաւանաբար ճիշտ է ըստ ամենեցուն սեռական-տրականի:

50. ԺԱ 31 բնակեցին, ձձ բնակեցան, ԺԲ 9 բնակեցաւ. բնագրում այս բայը մերթ է, մերթ ի լծորդութեան է. չեմ կարծում, որ այսպէս էր դասական գրաբարում. դարձեալ որոշուելիք հարց է:

51. ԺԲ 1 «յերկրէ քունմէ եւ յազգէ քունմէ», ԺԷ 12 «ի գաւակէ քունմէ» եւ այլուր. դասական միակ ձեւն է ի քունմէ, որ = քունմ + է. գրիչներն ազդուել են յիմմէ ուղիղ ձեւի կրկնակ-մմ-ից:

52. ԺԲ 19 «Առի գրա ինձ կնութեան: Եւ արդ աւանիկ կին քո առաջի քո: Առ եւ գնա ի բաց». այսպիսի պայմաններում դասականն է աւաղիկ (4 ձձ) կամ ահաւաղիկ (1 ձ). հմմտ. ԺԳ 9 «Ո՛չ աւաղիկ երկիրդ ամենայն առաջի քո»:

53. ԺԳ 14 «Հիւսիսոյ եւ Հարաւոյ, յԱրեւելից». բնագրում մեծատառով են աշխարհի չորս կողմերի անունները, ի տարբերութեան երեւանեան ուղղագրութեան. սակայն Բ 8 ընդ արեւելս:

54. ԺԴ 4 ապստամբեցին. յայտնի է, որ Եզնիկի եւ այլ ձձ պահել են դասական ապստամբ եւ ապստամբել ձեւերը. տե՛ս նաեւ Հայ. արմ. բառարան:

55. ԺԴ 14 գիշերի, երեք ձձ ի գիշերի, որ ըստ իս դասականն է, թէեւ բնագրերում, բառարաններում եւ քերականութեան դասագրքերում կայ գիշերի որպէս մակբայ. այստեղ ԺԹ 5 գիշերի, բայց 6 ձձ ի գիշերի:

56. ԺԵ 16 «չեւ եւս լցեալ է մեղք». իմաստը թէեւ եզակի է գուցէ, բայց քերականութիւնը պահանջում է եւ, որ կայ 9 ձձ-ում՝ «չեւ եւս եւ լցեալ», թէեւ չըջմամբ, որ ըստ իս դասական է: Հմմտ. ԺԼ 20 «մեղք նոցա մեծացան յոյժ», որ նոյնպէս եզակի է նշանակութեամբ ըստ միւս թարգմանութիւնների:

57. ԺԵ 18 «Ետ տէր ուխտ ընդ Աբրամով»։ Եթէ ետ-ը վրիպակ չէ փխ եդ, ապա անընդունելի է տպ-ներն ունեն եդ. տե՛ս ուխտ դնելը Համաբարբառում։

58. ԺԶ 3 «գԱգար Եգիպտացի»։ Ըստ երեւանեան ուղղագրութեան՝ Եգիպտացի որոշչի գլխագիրն աւելորդ է։

59. ԺԶ 7 «Եգիտ զնա հրեշտակ տեառն յաղբիւր ջուրց յանապատի անդ՝ յաղբիւրն, որ. . .»։ Եգիտ բայի որպէս տեղի պարագայ ճիշտ է ութը ձևի յաղբեր ներգոյականը կամ 6 ձևի յաղբերն. յամենայն դէպս զարմանալի է ջուրց յոգնակին. տե՛ս դիտ. 73։

60. ԺԷ 23 «առ Աբրամ . . . եւ զամենայն արու արանց»։ մէկ ձ գարանց. Լաւագոյնը կը լի- նէր [յ]արանց բացառականը որպէս անջատման անուղղակի խնդիր, թէեւ սա երբեմն հանդիպում է նաեւ սեռական հոլովով, եթէ երբեք այսպիսիները խաթարումներ չեն կամ էլ յունապատճէնում- ներ։

61. ԺԸ 2 «Երկիր եպագ ի վերայ երկիր»։ Եթէ սա վրիպակ չէ, ապա ճիշտն է «ի վերայ երկրի», ինչպէս սովորաբար ասուում է «Երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց» (ԺԹ 1)։

62. ԺԸ 11 «ի կանանց աւրինի», ինչպէս Ի 16, սակայն 6 ձև կանաց, որ դասականն է ան- շուշտ, քանի որ յոգն. ուղղ-ը չունի -ն-։

63. ԺԸ 14 «առ ի յԱստուած», 8 ձև յԱստուծոյ, որ նախդիրների գործածութեան տեսակէտից Լաւագոյնն է։ Ըստ իս, նոյնիմաստ նախդիրների կուտակումը դասական չէ։ Լ 41 «առ ի գլծեղոյ», մէկ ձ առ գլծեղոյ։

64. ԺԸ 24 «Եթէ իցեն յիսուն արդար ի քաղաքի»։ 5 ձև ի քաղաքին, որ Լաւագոյնն է, քանի որ հեռուն գտնուող այդ քաղաքի մասին ԺԸ 26-ում ասուել է. «Եթէ գտցի ի Սողոմ յիսուն արդար ի քաղաքի անդ»։

65. ԺԸ 25 «սպանանել զարդարն ընդ ամպարշտի», 7 ձև «ընդ ամպարշտին», որ նախընտրե- լի է, քանի որ զարդարն յոգնով է։ Հմմտ. ԺԸ 23 «զարդարն ընդ ամպարշտին» եւ ԺԸ 25-ի կէսում՝ «լինիցի արդարն իբրեւ զամպարիշտն» եւ այլն։

66. ԺԹ 2 ընդ առաւառս, եզակի իմաստով, ձև ընդ առաւառն, ընդ առաւոտ, յառաւառն եւ ԺԹ 27, Ի 8 ընդ առաւառն առանց տարբերութեամբի. ընդ առաւառս կայ նաեւ այլ դասական բնագրերի ձև-ում ընդ առաւառն-ի հետ, որ, ըստ իս, միակ ճիշտն է, եւ -ս-ն նախկին -ն է երկաթագիր գրչութեամբ, որ սխալ է ընթերցուել երբեմն։

67. ԺԹ 14 «ի տեղւոջէ աստի յայսմանէ»։ Ըստ իս, աստի-ն աւելորդ է եւ չկայ երեք ձև-ում։

68. ԺԹ 15 «զի մի եւ դու կորնչիցիս ընդ անարեւմութիւն քաղաքիդ»։ 6 ձև եւ տպ-ներն ու- նեն ընդ անարեւմութիւնս եւ մէկ ձ ընդ անարեւմութեան, ըստ որում երկուսն էլ քերականորէն ճիշտ են, իսկ բնագրի ընդ անարեւմութիւնը ինձ անհասկանալի է. միւս թարգմանութիւնների մէջ այս գոյականը եզակի է եւ ունի ներգոյականի, գործիականի կամ «պատժի պատճառով» իմաստ- տը։ Ի՛նչ էլ լինի, բնագրի ընդ եւ եզակի հայցականը յստակ չէ։ - Միւս կողմից՝ քաղաքի սեռա- կանի -դ յօդի փխ սպասելի էր -ս յօդ, ինչպէս ութը ձ-ում քանի որ Լուստի հետ խօսող երկու- հրեշտակները նոյնպէս նոյն քաղաքում են, եւ ԺԹ 14-ում կայ զքաղաք-ս։

69. Ի 8 «զամենայն զծառայս իւր . . . զամենայն բանս զայստիկ»։ ձև ունեն ծառայս, ծառայսն, առանց գ- նախդրի, որն ինձ աւելորդ է թւում. ձև ունեն զբանս, զբանսն, որոնց նախ- դիրը չի մտել բնագրի. իսկապէս նման հարցեր շատ նուրբ են, եւ ընտրութիւնը դժուար է, որով- հետեւ այս կամ այն ձևը քերականորէն բացայայտ սխալ չէ։

70. ԻԱ 22 Փիկալ, յուն. Φικολ, որ պիտի տառագարծուէր Փիկոզ կամ Փիֆոզ. ձև ունեն Փիֆոզ, Փիգոզ, Փիւֆոզ, Փէֆոզ. յամենայն դէպս -աւ- ի ոչ մի հիմք չկայ։

71. ԻԱ 23 «չմեղ անչել ինձ եւ մի զաւակի իմում եւ անուան իմոյ»։ երկու ձև իմում, որ սովոր- րաբար դասական տրականն է համարւում եւ նախընտրելի է, ինչպէս նախորդող «զաւակի իմում»։

72. ԻԲ 2 «ի վերայ միոյ լերանց, յորոց ասացից քեզ»։ Ըստ միւս թարգմանութիւնների, իմաստ- տըն է «լեռներից մէկի վրայ, որ քեզ կ'ասեմ»։ այստեղ եւս անջատման խնդիրը պիտի դրուէր բա- ցառական [ի] լերանց, եւ յորոց յոգնակի փխ սպասելի էր [գոր] կամ [գորմէ] եզակին, քանի որ յարաբերեալն է միոյ դերանունը։ Հմմտ. ԻԲ 3 «եկն ի տեղին, գոր ասաց նմա Աստուած»։

73. ԻԴ 11 «առ ջրհորոյ ջրոցն», ԻԶ 18 «զջրհորսն ջրոց», ուր ջրոց յոգնակի է (տե՛ս նաեւ դիտ. 59), իսկ ջրոյ եզակին ունեն ԻԴ 43 «ի վերայ աղբեր ջրոյս», ԻԱ 19 «ջրհոր ջրոյ», նոյնը ԻԶ 19, Լ 38 «դնէր . . . յաւազանս ջրաբերց ջրոյն»։ եզակին նախընտրելի է, եթէ երբեք յոգնակին ըստ յուն. բնագրի չէ։

74. ԻԴ 22 «ըստ դահեկանի անուոյ . . . ի տասն դահեկանէ անոյ նոցա»։ երեք ձև անոյ, որ նա- խընտրելի է, ինչպէս գերադասուել է անուոյ-ն միւս ձև-ի անուոյ-ին։ Յիշենք. «Ընդհանրապէս շատ բառերու ուղղագրութիւնը դ եւ լ գրերու մէջ կ'երբայ, մանաւանդ յ գրի քով. - ըստ նախնեաց առ հասարակ դ գրուած, եւ նոր գրութեամբ՝ ըստ մեծի մասին ՚։ Այսպէս են՝ Այդ, այլ. գայդ, գայլ. թոյլ, (թող,) քոյլ. ծոյլ, յոյլ, ձոյլ, արձոյլ. ծոյլ, եւ այլն. . .» (Քեր. հայկագն. լեզ., 489-490)։

75. ԻԴ 23 «իցէ՞ ի տան քում մեզ տեղի յիջավանաց», ձև իջավանաց, իջեւանաց, իջաւա- նաց, իջեւանաց եւ ԻԴ 25 «տեղի իջավանաց», որ նախընտրելի է սեռականի տեսակէտից։

76. ԻԴ 60 «Բոյր մեր, եղիցես ի հագարս. . .»։ ծան.՝ «Զօհրապեան հրատարակութեան մէջ սխալ կէտադրութեան պատճառով ունենք իմաստի աղաւաղում. Բոյր մեր եղիցես ի հագարս եւ ի բիւրս. . . : Ուղղել ենք ըստ Ե(բրայերէն), Ա(սորերէն) եւ Յ(ունարէն) բնագրերի իմաստի»։ պիտի յիշեցուէր, որ Ա. Բագրատունու հրատարակութիւնը արդէն ունի սրբագրուած կէտադրու- թիւնը նոյնութեամբ։ 1895-ի տպ-ի բնագիրն այլ է. «Բոյր մեր եւ. իցես ի հագարս. . .»։ - Ահստաս- լի է, որ ի բիւրս բառի ի բիւրս հնագոյն ձևը չի յիշատակուած ըստ ձև-ի, եթէ ունէին, քանի որ բը- նագիրը կազմող անտեսելի ուղղագրութեան որոշ «մանրուքներ»։ Յ. Զօհրապեան՝ ի բիւրս։

77. ԻԴ 61 «Եւ գնացին ընդ առն»։ այս մարդը ընթերցողին արդէն յայտնի է շարադրանքի նախորդ տողերից, ուստի եւ նախընտրելի է 9 ձև-ի առնն որոշեալ յօդաւոր ձևը։

78. ԻԴ 62 «առ Զրհորովն տեսեան բնակէր՝ յերկրին ի կողմն Հարաւոյ»։ Լաւագոյն է մէկ ձ-ի ի կողմն ներգոյականը բնակէր բայի հետ։

79. ԻԵ 6 «արձակեաց զնոսս յիսահակայ որդւոյ իւրոյ»։ դասականն է երկու ձ-ի իւրմէ բա- ցառականը։ Նախընտրում եմ նաեւ մէկ ձ-ի յորդւոյ նախորդաւոր բացայայտիչը։ ԻԹ 14 «ի մարմնոյս իմոյ» փխ իմմէ։

80. ԻԵ 31 զանդրանկութիւնս, 32 անդրանկութիւնս. ձև ունեն նաեւ եզակիները, ինչպէս ԻԵ 34, ԻԷ 36 զանդրանկութիւնս բնագրում. միւս թարգմանութիւններն ունեն «անդրանկու- թեան իրաւունք» եզակին։

81. ԻԶ 12 «յերկրին յայնիմ», որ բացայայտ վրիպակ է փխ տպ-ների յայնմիկ։

82. ԻԶ 18 «Իսահակ փորեաց զքրիտքսն ջրոց, զոր փորեցին . . . եւ իցին գայն Փղշտացիքն»։ ընդգծուած յոգնակին եւ եզակին անյարիր են, եւ սպասելի էր գայն[ս] կամ գայն[ոսիկ]։ Ծան. մէջ ասուած է՝ յուն. ձ-ը, բացի մէկից, ունեն զնոսս, որ միանգամայն ճիշտ է։

83. ԻԷ 17 «Եւ ետ զխորտիկն եւ զհացն, զոր արար»։ ձև զխորտիկսն, ինչպէս բնագրում ԻԷ 4, 9, 14. Լաւագոյնը յոգնակին է։

84. ԻԸ 6-7 «Եւ իբրեւ ետես Եսաւ, եթէ. . . եւ ունկնդիր եղեւ Յակոբ. . . եւ գնաց ի Միջագետս Ասորոց»։ միւս թարգմանութիւնները չունեն հայ. իբրեւ-ի համագործ, որով սկսուող երկրորդա- կան նախադասութիւնը գլխաւոր չի ունենում։ Կամ էլ Ասորոց բառից յետոյ պէտք է ստորակէտ դնել եւ Ց-ը տունը սկսել մէկ ձ-ում առկայ իբրեւ ստորադասական շաղկապով, որով կը ստաց- ուեն երկու համադաս ստորադասներ, որոնց գլխաւորը կը լինի տ. 9՝ «գնաց Եսաւ. . .»։

85. ԻԹ 6 Ռաբէլ, ձև Հոաբէլ, Հոաբէլ, Ռաբէլ, Ռաբէլ. -դ-ն պարտադիր է, իսկ ինչ վերաբը- րում է այսպիսի դէպքերում սոսկ Ռ-ի կամ Հո-ի ընտրութեան, ապա սա էլ վերջնականապէս որոշ- ուելիք հարց է. ըստ իս, դասականում պիտի լինէր Հոաբէլ։

86. ԼԱ 18 «խաղացոյց զամենայն զինչս իւր եւ զամենայն ստացուածս»։ մէկ ձ ունի Լաւագոյն գտացուածս յոգնակին. եւ ինչո՞ւ ոչ «[զ]ստացուածս իւր», ինչպէս «զամենայն զինչս իւր», կամ էլ երկու գոյականներն էլ առանց գ- նախդրի։

87. ԼԱ 29 երէկ, -է--ով, իսկ ԼԱ 2 յերեկն, -ե--ով։ 2 ձ ունեն յ- նախորդով յերեկ, որ նախըն- տրելի է։ Արմ. բառ-ը հակասական է։

88. ԼԱ 31 «զամենայն ինչ զիմ», ձև ինչս, ինչպէս ԼԱ 37 «զամենայն զինչս իմ», որ նախըն- տրելի է, առանց գ- նախդրի կրկնութեան. յոգնակիի համար ունենք նաեւ ԼԱ 37 «յամենայն ըն- չից քոց»։

89. ԼԱ 41 «Այս քսան ամ է ի տան քում էի». եթէ սա ընդունենք, ապա սպասելի էր զի, ինչպէս ԼԱ 38 «Այս քսան ամ է, զի էի ընդ քեզ». բայց մէկ ձ ունի Զֆսան ամ փիս «Այս քսան ամ», սակայն է-ո՞վ, թէ՞ առանց դրան, որ չունեն նաեւ այլ ձ: Յամենայն դէպս՝ (,) -ով՝ «է, ի»:

90. ԼԲ 25 «գամուշի գըստի», ձ գամուշի գըստի, որ լաւագոյնն է: Եւ ինչո՞ւ այս ի-ը հերթագայութիւնը, որ պատահական կամ վրիպակ չի թւում լինել, քանի որ կրկնուել է ԼԲ 25, 31, 32-ում:

91. ԼԳ 14 «ըստ կարի եւ ըստ պարապոյ ճանապարհիդ առաջի իմ եւ ըստ կագդուրել ման-կանց». երեք ձ ըստ կագդուրելոյ, որ կանոնաւոր է. Եղնիկի ձ-ում էլ կայ ըստ «ըստ, համեմատ» եւ անթեք անորոշ դերբայ:

92. ԼԳ 15 «որ ընդ իս են», երկու ձ իսն, որ հաւանաբար նախապէս իս[ս] էր երկաթագրով:

93. ԼԸ 7 Եսպան, մէկ ձ սպան, ինչպէ. բնագրում ԼԸ 10 եւ այլ ուր. ածականն աւելորդ է, քանի որ սպան-ը դասականում արտասանում էր երկու վանկով՝ ըս-պան կամ սը-պան: Ըստ Համաբար-բառի, ամբողջ Աստուածաշնչում առաջին հայեացքից չկայ Եսպան:

94. ԼԹ 12 «եւ նորա թողեալ զձորձս իւր ի ձեռս նորա եւ փախեալ ել արտաքս». ձ ունեն «փա-խեալ եւ ել», ուրիշներ՝ «փախեալ ել». միւս թարգմանութիւնները համապատասխանում են վերջին երկու ընթերցումներին. նախընտրում եմ «փախեալ եւ ել»-ը. բնագիրը կազմողը կէտադրու-թեամբ չի յստակացրել իր ըմբռնումը: Հմմտ. ԼԹ 13, 15, 18 «եթող . . . եւ փախեալ»:

95. ԼԹ 22 «գամենայն, որ ինչ գործէին անդ, նա էր, որ գործէր». դիտ. 13-ում ասել եմ, որ տարօրինակ է ամենայն դերանունան յոգնակի իմաստ տալը, ինչպէս այստեղ, որ ինձ կասկածելի է թւում. եթէ գործէին-ը ներգործական է, ապա յարմար է որոշ ձ-ի գոր-ը, իսկ եթէ կրաւորական սեռի է, ապա ըստ իս նախապէս գործէ[ր]ն էր երկաթագրով:

96. Խ 16 «ունէի ի գլուխ իմում», ձ «ի գլուխ իմ», մէկն էլ՝ «ի գլխի իմում», որոնք աւելի կանոնաւոր են:

97. ԽԱ 1 «կայցէ առ եզր գետոյ». ձ եւ ԲԳ առ եզր, երկու ձ առ եզրք, ԹԻւք ԻԲ 36 յեզր, որոնք միակ ճիշտ ձեւերն են որպէս ներգոյականի իմաստով տեղի պարագայ. բնագրում էլ ԽԱ 3 եւ 17 առ եզր: Այստեղ եւ Աստուածաշնչում այլ ուր եւս հանդիպող մի քանի առ եզր ներգոյականը սրբագրելի է ըստ իս: Յ. Չօհրապեան յեզր. մերժելի:

98. ԽԱ 2 «եւթն երինջը ելանէին . . . զազիրը տեսեամբ եւ վտիտը մարմնով». եթէ ձ մարմնով, որ նախընտրելի է, ինչպէս ԽԱ 18 «ընտիրը մարմնով»:

99. ԽԱ 19 «որպիսի ոչ տեսի . . . զազրագոյնս քան գնոսա». երկու ձ որպիսիս, որ ըստ իս աւելի լաւ է:

100. ԽԱ 18 «եւթն երինջը ընտիրը մարմնովք եւ գեղեցիկ տեսանելով». ձ գեղեցիկ, որ նա-խընտրելի է, ինչպէս ԽԱ 2 «գեղեցիկ տեսանելով եւ ընտիրք մարմնով [ք]»:

101. ԽԱ 5, 22 «եւթն հասկ ելանէին», երկու ձ հասկ, որ նախընտրում եմ. ԽԱ 3, 39 «եւթն երինջք ելանէին», ԽԱ 6 «եւթն այլ հասկ սինք», ԽԱ 7 «գեւթն հասկսն զընտիրս», ԽԱ 20 «եւթն երինջքն վտիտք», ԽԱ 24 «եւթն հասկն ազազունք» եւ այլն եւ այլն. ըստ իս նախընտրելի է յոգնակին: Թուական որոշիչների հետ որոշեալի թուի հարցը նոյնպէս քննելի հարցերից է:

102. ԽԱ 30 «եկեացէ եւթն ամ սովոյ». ձ եկեացեն, եւ մէկ ձ ամֆ. նախընտրում եմ ԽԱ 29-ի «ամք եւթն եկեացեն»-ի նման յոգնակին:

103. ԽԱ 32 «ճշմարիտ է բանն առ ի յԱստուծոյ», ձան. «Առ ի չունեն յունարէն մէկ եւ հայե-րէն երեք ձեռագիր». երեւի պիտի ասուէր «առ ի յ», այսինքն յունարէնը բացառականի փիս ունի սեռական՝ Աստուծոյ. ի՞նչ էլ լինի, հայ. նոյնիմաստ նախդիրների կուտակումն ըստ իս դասական չէ:

104. ԽԱ 51 «գամենայն զվիշտս իմ», ձ վիշտս, ինչպէս մէկ նախդրով ԽԱ 54 «յամենայն երկրին», ԽԱ 55 «ցամենայն եգիպտացիսն», ԽԱ 56 «գամենայն շտեմարանս» եւ այլն:

105. ԽԳ 18 «մտանեմք անդր առ ի խուելոյ զմեզ. արկանել ի վերայ մեր եւ առնուլ զմեզ ի ծառայս եւ գէշս մեր». միւս թարգմանութիւններից պարզում է, որ երեք անորոշ դերբայները՝ նպատակի պարագայ են, համադաս, ուստի եւ արկանել-ի (.)-ի փիս պիտի դրուէր (,) , եւ երեքն է

պիտի լինէին նոյնահոլով՝ առ (կամ առ ի) նախդրի հետ նպատակի հայցական, ըստ իս՝ առ [ ] խուել, թէեւ տողատակում չկայ այս: ԽԵ 7-ում էլ ունենք այսպիսի երկհոլով անորոշ դերբայներ. «զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ի թողոյ ձեզ զաւակ յերկրի եւ կերակրել զձեր մնացորդս մեծամեծս»:

106. ԽԵ 4 չօգան, բացայայտ վրիպակ փիս չոգան:

107. ԽԸ 9 «ասէ Յովսէփ զհայրն իւր». հաւանաբար վրիպակ է փիս ցհայրն. երեք ձ ցհայր իւր. ի դէպ, շատ դժուար է որոշել, թէ ստացական ածականների որոշեալները ո՞ր դէպքերում պէտք յօդ առնեն կամ ոչ:

108. ԽԹ 10 «մինչեւ եկեացէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն». ձան. «Յ(ունարէն) եկեացեն հանդերձեալքն նորա», եւ հայերէն ձ ունեն «եկեացեն». միանգամայն անկանոն են հան-դերձեալքն յոգնակի ենթական եւ եզակի է բայը կամ ստորոգեալը:

Եզրակացութիւն

«Գիրք ծննդոց»-ի քննական բնագրի հրատարակութիւնը ուրախալի եւ ողջունելի է: Զեռագրե-րի տուեալները մեծագոյն մասամբ լաւ են օգտագործուել, բայց ինձ թուում է, որ բնագիրը կարիք ունի որոշ տեղերում շտկուելու, բարելաւուելու ըստ ձեռագրական տարբերակների եւ եր-բեմն, ինչո՞ւ չէ, սրբագրութիւնների միջոցով: Մի քանի վրիպակները վերացուելու են: Յուսով եմ, որ սա վերջնական տպագրութիւնը չի լինի: Անհրաժեշտ է նաեւ, որ բնագրերը քննարկուեն, եւ դրանք կազմողները մեծամեծակ չթողնուեն. շատ դժուար է տասնեակ այլընթերցումներից ընտրել լաւագոյնը: Ուղղագրական որոշ հարցեր պէտք է լուծուեն լեզուաբանների օգնութեամբ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ  
ժնեի համալսարան